ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Դիլիջանի համայնքապետարանը հայտարարում է մրցույթ «Դիլիջանի մանկական երաժշտական դպրոց» ՀՈԱԿ-ի տնօրենի **թափուր պաշտոն զբաղեցնելու համար**

Տնօրենը՝

իրականացնում է «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքով, ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 2024 թվականի մարտի 27-ի թիվ 20-Ն հրամանով և կազմակերպության կանոնադրությամբ նախատեսված գործառույթները:

Մրցույթին մասնակցելու իրավունք ունեն Հայաստանի Հանրապետության այն գործունակ չափահաս քաղաքացիները, որոնք՝

1) բարձրագույն կրթություն.

2) հանրային ծառայության առնվազն չորս տարվա ստաժ կամ առնվազն հինգ տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ կամ համապատասխան բնագավառի առնվազն երեք տարվա աշխատանքային ստաժ, եթե օրենքով այլ բան նախատեսված չէ.

Տնօրենի ընտրության լրացուցիչ պայմաններն են՝

1. տրամաբանելու և տարբեր իրավիճակներում կողմնորոշվելու ունակություն.
2. ֆինանսատնտեսական գործունեության իրականացման կարողություն.
3. համակարգչով և ժամանակակից այլ տեխնիկական միջոցներով աշխատելու ունակություն.
4. աշխատանքի կազմակերպման և ղեկավարման անհրաժեշտ հմտություններ.
5. ենթակաների հետ վարվելու անհրաժեշտ էթիկայի կանոնների իմացություն.
6. առնվազն մեկ օտար լեզվի իմացություն:

Մրցույթին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք՝

1) ովքեր դատապարտվել են հանցագործության կատարման համար, և նրանց դատվածությունը մարված կամ վերացված չէ.
2) որոնց օրենքով արգելվել է ղեկավար պաշտոններ զբաղեցնել կամ ովքեր զրկվել են որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից.
3) ովքեր նախընթաց երեք տարիների ընթացքում եղել են սնանկանալու պատճառով լուծարված և իրենց պարտատերերի օրինական պահանջները չբավարարած կազմակերպության ղեկավար.
4) 65 տարին լրացած քաղաքացիները.
5) ովքեր ներկայացրել են փաստաթղթեր, որոնք չեն համապատասխանում ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի 2020 թվականի մարտի 26-ի թիվ 02-Ն հրամանով հաստատված կարգի 12-րդ կետով սահմանված պահանջներին, լրիվ չեն կամ թերի են:

«Դիլիջանի մանկական երաժշտական դպրոց» ՀՈԱԿ-ի տնօրենի ամսական պաշտոնային դրույքաչափը կազմում է 180 000 (հարյուր ութսուն հազար) ՀՀ դրամ:

«Դիլիջանի մանկական երաժշտական դպրոց» ՀՈԱԿ-ի հասցեն՝ ք. Դիլիջան, Ուսանողական փող., թիվ 41:

Մրցույթը կկայանա 2025 թվականի օգոստոսի 19-ին, ժամը 13:00-ին, ք. Դիլիջան, Մյասնիկյան 55 հասցե, հեռ. 060 700 131:

Փաստաթղթերի ընդունման վերջնաժամկետն է 2025 թվականի օգոստոսի 4-ը:

Դիմող ՀՀ քաղաքացիները և փախստականի կարգավիճակ ունեցող անձինք պետք է ներկայացնեն հետևյալ փաստաթղթերը՝

1) դիմում.

2) մեկ լուսանկար՝ 3x4 չափսի.

3) քաղվածք աշխատանքային գրքույկից կամ տեղեկանք աշխատանքային գործունեության մասին.

4) ինքնակենսագրություն.

5) անձնագրի կամ նույնականացման քարտի, բարձրագույն կրթությունը հավաստող փաստաթղթի, արական սեռի անձինք՝ նաև զինգրքույկի կամ դրան փոխարինող ժամանակավոր զորակոչային տեղամասին կցագրման վկայականի բնօրինակները և պատճենները.

6) տեղեկանք՝ մշտական բնակության վայրից.

7) հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (դրանց առկայության դեպքում):

Քաղաքացին մրցույթին մասնակցելու համար փաստաթղթերը ներկայացնում է անձամբ՝ անձնագրով կամ անձը հաստատող այլ փաստաթղթով:

Փաստաթղթերն ընդունվում են Դիլիջանի համայնքապետարանում /ք. Դիլիջան, Մյասնիկյան 55 հասցե /, ժամը 10:00-ից մինչև 17:00-ն, բացի շաբաթ և կիրակի օրերից: